ր իմաց բառերու մեկնութիւնն Հայերէն, լա-
տիներէն եւ լեհերէն:

3. էջ 21—354. Բառք Երրայեցոց եւն
(տե՛ս Թ. 21) Թարգմանուած Թաթարերէնի.
այսպէս.

Արբա՛. աղալարնընկ աթաար. սարգիս-
տա:

Արբան. պիյիքլիք. եղեկ. Ի . . .

Կաւարտի այսպէս՝

Գուրք. խըլըլ դօվուլեա սօքունչ:

Գուրք. պաշխա պաշխա:

Գուր. էրուլի սաղըղ քուրայ:

Գուէից.

Գուրու. ուչու:

Բառագրքիս Թաթարերէն Թարգմանու-
թեան առաջին փորձն է, հաւանօրէն սկզբնա-
գիրը. տեղ տեղ տողեր դատարկ ձգուած՝
թերեւս յաւելուածներու համար: Կան եր-
կորդ զրչէ ալ աւելցուած բառեր՝ լեհերէն
բացատրութեամբ:

4. էջ 357—360. Անուանք քաղաքաց
(Հայերէն): Աւետեաց երկիրն՝ Երուսաղէմ
է . . .:

Աւարտեցաւ ի թՎ. ՌՀԷ. մարտի ամսն յոյն ժէ: Չեռամբ մեղապարտ Մկրտչի Ղա-
ղարի որդոյ: Ով եղբարք, աղաչեմ զձեզ, որ
կարդայք ի վերայ սորա կամ օրինակէք ի
ամանէ, յիշել կու հայցեմ ի ձեզանէ մէկ Հայր

մերին: Եւ յիշողք յիշեալ լիցին ի միւսան-
կամ զալստեանն Քրիստոսի. որ եկեալ նո-
րողեսցէ փառօք ի փառս:

Հմտ. Macler: REA 7 (1927), 147:

23.

ԲԱՌԱԳԻՐՔ ՀԱՅԵՐԵՆ-ԼԱՏԻՆԵՐԷՆ

Cod. arm. 62. — ԺԷ/ԺԸ. դար:

ԹՈՒՂԹՔ՝ 104: — ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 12,5X7,5 հմ.:
— ՆԻԻԹ՝ ՔՈՂՔ: — ԳԻՐ՝ ՈՌՈՐ: — ԳՐԶՈՒԹԻԻՆ՝
երկսիւմ: — ԿԱԶՄ՝ սպիտակ կաշի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝
լաւ. էջ 200—208 դատարկ. ուր կան տեղ տեղ ուրիշ
ձեռքէ գրուած հաշիւներ եւմ: — ՏԵՂԻ ԵՎ ԳՐԻԶ՝ ամ-
ծամօք: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԷ/ԺԸ. դար:

Մատենան է՝ «Բառգիրք իմաստասիրա-
կան բարից Հայոց եւ Լատինացւոց»: Կը սկսի
այսպէս. Ազահութին, Avaritia, Ազգարա-

նութին, Genealogia եւն: Վերջ՝ Օտարա-
նալ, Alienari. Օրացոյց, Diarium:

ՅԻՇԱՏԱԿԳՐՈՒԹԻԻՆ. էջ 1. ստորեւ.
Joannes Alexandrowicz:

էջ 192. Hristophorus Szymonowicz.

էջ 209 (կողին վրայ). էջս լիպրիս Ան-
դրէէ Բիրումովիչ. Pirumowicz:

Հմտ. Macler: REA 7 (1927), 131:

2.

Յ Ո Ւ Յ Ա Վ

ՀԱՅԵՐԷՆ ՉԵՌԱԳՐԱՑ

Ի ԼՎՈՎ ԵՒ Ի ՍՏԱՆԻՍԼԱՒՈՎ

1 (24).

ԱՌԵՏԱՐԱՆ

Ուիլ = 1197/8:

ԹՈՒՂԹՔ՝ 425: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20 X 22 սմ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ ԵՐԼԵՐԻՆ: — ՆԻԻԹ՝ սպիտակ մագաղապ: — ԿԱՋՄ՝ փայտեայ, կարմիր քաւիշալ պատուած, արծաթով կոստղիւծ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: ԹՂ. 1 ԵՒ 423—425 վերջին կազմողէն մուծուած: Ընդ մէջ քղ. 4—5 ինկած է կանոն թ. 1. ինկած է ման թղ. 418, որում տեղ կազմողէն դրուած է դատարկ բուղր մը: Դատարկ՝ 1ա—2ա. 3բ—4ա. 5ա, 6բ—7ա. 8բ—9ա. 10բ—11ա: — ԳԻՐ՝ խոշոր երկաքաղիբ: — ԽՈՐԱՆՆԵՐ՝ 2բ—10ա (Եւսեբիայ քուղթն Եւ Համարարբաոֆ) քոչնագարդ, վիշապագարդ, ծաղկագարդ, բազմազոյն ռուկիւտոն: — ՆԿԱՐՔ՝ 11բ, 128բ, 205բ, 325բ (չորս աւետարանիչներ): ԿԻՍԱԽՈՐԱՆՆԵՐ՝ 12ա, 129ա, 206ա, 326ա: — ԼՈՒՍԱՆՅԱՋԱՐԴՔ՝ կիսախորանմերու լուսանցքներուն: — ԺԱՍԱՆԱԿ՝ 1197/8: — ՏԵՂԻ՝ Մըլիմի վանք: — ԳՐԻԶ՝ Գրիգոր Միլնեցի: — ՈՆԵՊԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Լվովի Արքեպիսկոպոսարանի:

Մատենա ի Աւետարան.

Մատթէոս՝ Թղ. 12ա.

Մարկոս՝ Թղ. 129ա.

Լուկաս՝ Թղ. 206ա.

Յովհաննէս՝ Թղ. 326ա: Ունի վերջաւորութեան՝ Իրք կնոջն չնացելոյ:

Գլխաւոր Յիշատակարան. Թղ. 417բ—421բ.

ՅԻՇԱՏԱՆԳՐՈՒԹԻՒՆՔ. 1. Թղ. 28բ:

2. Թղ. 204բ:

3. Թղ. 325ա:

4. Թղ. 421բ—422ա. բոլորգիր:

5. Թղ. 422ա (որիչ ձեռք բոլորգիր):

6. Թղ. 422ա (որիչ ձեռք բոլորգիր):

7. Թղ. 423ա—բ (նոյն գրով):

Ձեռագրի մանր նկարագրութիւնը տուած եմ Հանդ. Ամս. 44 (1920), 95—112 և 200—236. ուր յոռաջ բերուած են նաեւ Յիշատակարանն և Յիշատակագրութիւնները, նաեւ մանրանկարներէն 13 հատ: Նոյնը արտատպուած հանդերձ գերմաներէն համառոտութեամբ՝ խորագրի տակ. Հ. Ն. Լեկինսոն, Սկեսայի Աւետարանը 1197 թուականէն Լվովի հայ Արքեպիսկոպոսարանի գրադարանին մէջ. Վիեննա 1930 (գերմաներէն համառոտութեամբ՝ Das Skevra-Evangeliar vom Jahre 1197, aufbewahrt im Archive des armenischen Erzbistums, Lemberg, Wien 1930): Հմտ. նաեւ F. Macler, Rapport sur une mission scientifique en Galice et en Bukowine: Revue des Etudes arméniennes, 7 (1927), 97—105, ուր նմանահանութեամբ արուած են 4 խորան և Յիշատակարան-Յիշատակագրութիւնները:

2 (25).

ԱՌԵՏԱՐԱՆ

ՉՂԷ = 1348:

ԹՈՒՂԹՔ՝ 271: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 25 X 17,2 սմ: — ՆԻԻԹ՝ մագաղապ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱՋՄ՝ փայտեայ, քաւիշապատ, արծաթեայ շրջանակով, կեցորոնի՝ արծաթեայ խաչ. պոպէս ման Խրիստոս կողք, հոս կեցորոնի Ս. Աստուածածին: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ — ԽՈՐԱՆՆԵՐ՝ քղ. 1բ—2ա, 3բ—4ա, 5բ—6ա, 7բ—8ա. 9բ—10ա: — ՆԿԱՐՔ՝ 11բ (Մատթ.), 140բ (Ղուկաս), 221բ (Յովհ.), 283բ

(Յիսուս Քրիստոս): Մարկոսի Ակարը ինկած: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ 12ա, 90ա, 141ա, 222ա: — ԼՈՒՍԱՆՅԱՋԱՐԴՔ, ՆԱՐԿԱՆԳՐՔ՝ բազմազոյն և վաղիւնջ, մեծ յաճախութեամբ: Մամրանկարչութիւնը բազմազոյն և շատ յաջող: — ԳՐԻԶ՝ Միլիսեղ: — ՆԱՂԿՈՂ՝ Առաքել: — ՏԵՂԻ՝ Տապարալըզ գիւղ: — ԺԱՍԱՆԱԿ (1348): — ՍԵՊԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Լվովի Արքեպիսկոպոսարանի:

Մասնավոր հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

1. Թի. 120-Ս. 1927 թ. 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

1927 թ. 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Ն Դ Ե Կ Ե Դ Ե Կ Ե Դ Ե Կ

3 (26)

Հարկերի մասին 1927 թ. 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

1. Թի. 120-Ս. 1927 թ. 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

Սահմանված չէ զրոյացվող հարկերի մասին 1927 թվականի հունիսի 1-ին հրապարակված հրահանգի համաձայն

երկրորդ Ձիմեռյին, որ է աղղու Բնկուղ-ձեռամբ մեղաւոր ևւ անարժան լուկ տնուն Սիմոն Երիցուի, որ միայն անուամբս եմ կոչեցեալ, բայց զործովս հեռացեալ, զմազեցի զայս սուրբ տառս ի խնդրոյ տատուածասէր եւ երկիւղած տիկնոջն թանի նաւ-դուխեային, որ է կենակից Աւետիքէնց թան Սիմ-յոն, եւ զուստր թան Պոհտանին Տոնապաղենց, զի յոյժ փափաղ ևւ քերականոյ արտիւ եւ զսա զրել ի հալալ ընչից իւրոց ևւ եղ յիշատակ անջինջ յաւիտե-նական իւր եւ իւրայնոցն՝ կենդանեաց ևւ ննջեցելոց ևւ ամենայն արեան մերձաւորացն, ի զուռն Հաճառ-կատար մենաստանին ի քաղաքին Ալջուլ։ Արդ աղա-շեմ զձեզ զամենեան, ոյ սուրբ հայրք եւ Եղրայրք, նազելի պաշտօնեայքդ Քրիստոսի (Թուղթ ինկոս) :

2. Թղ. 146ա. Եւ զմեղաւոր ևւ զանարժան զձու-դիկս յիշեալ ի Տէր։ Ո՛հ, ո՛հ, ո՛հ թէ զիրս փաւ, ևւ ձեռս հող ևւ փռչի պատնա :

3. Թղ. 249ա. Երեւելոյ, Տէր իմ, Տէր, զերեսս քո, խաւարեալ մեղաւք զրողի քո սուրբ մոտենիւ, զի քեզ սպասէ ամենայն մակի որդորմել, ամէն։ Ողորմեա ինձ, Տէր, ողորմեա, ստացողի զրոցս։ ևւ Եղիկի անարժան մեղաւոր զձուդիկս :

4. Թղ. 324ա. ասորեւ. W Ewangelie to nabył X. Krzysztof Jozef Bernatowicz y sporządził do Kosciola S. Anny, w R. P. 1719. այսինքն Աւե-տարանս զնեց Տէր Քրիստոսի Եւանջելի Բեռնատուր-ովի ևւ նուիրեց Ս. Աննայի Եկեղեցւոյն, յամի Տետոն 1719 :

4 (27).

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

ՌՆԱ = 1652 :

ԹՈՒՂԹՔ՝ 307. — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 20×15.5. — ՆԻԻԹ՝ Բուղբ. — ԳԻՐ՝ բոլորգիր. — ԳՐԶՈՒ-ԹԻՒՆ՝ Երկսիւմ. — ԿԱԶՄ՝ Բաւեայ. — ՀԱՆԳԱ-ՄԱՆՎ՝ լաւ. — ԴԱՏԱՐԿ՝ Բղ. 1—5. 12թ. 13թ. 14թ. — ԴԱՄԻՎ՝ չկամ. — ԿԻՍԱՆՈՐԱՆԻՐ՝ 14ա. 93ա. 146ա. 237ա. Բազմագոյմ, ոսկեխառն, յաջող. — ԼՈՒՍԱՆՈՐԱՆ՝ ԶԱՐԳՐԵ Եւ ՆԵՂԿԱՆԻՐԵՐ Ողմպէտ Բազմաղղոյմ, ոսկե-խառն, յաջող. — ԳՐԻԶ՝ Մարատ Սարգիս. — ՏԵՂԻ՝ Երկուցա. — ԺԱՄԱՆԱԿ՝ 1652 :

Մատենան է Աւետարան Ա—Դ. մասե-րով :

1. Թղ. 5ր. Մատթէոս .
2. Թղ. 92ա. Մարկոս .
3. Թղ. 146ա. Ղուկաս .
4. Թղ. 237ա. Յովհաննէս :
5. Թղ. 290ա. Իրք կնոջն Հնացելոյ :

ԵԻՇԱՏԱԿԱՐԱՆ : Թղ. 300ա. Գրեցաւ աւետարար Կոսակս . . .

Գրեցաւ ևւ կատարեցաւ ձեռամբ մեղաւոր ևւ անարժան ծառայ Աստուծոյ Մարատ Սարգիս որդի որդորմածնողի Միքայելին Երկուցա քաղաքի. կատա-րեցաւ ողորմեամբ սուրբ Հոգւոյն, Քիւրականին Հայոց մեծաց ՌՈՒԿԻՆ, սեպտեմբեր ամսոյ Դ. արն Եւլի :

Արդ ստացաւ զսա Հաւատարմ ևւ Բարեպաշտ Խոճա Թուսան շատ փափաքմամբ. Լսուր զրել յիշա-տակ իւրէն ևւ իւր ծնողացն Հոգուռն. ևւ եղ յիշատակ ի յերկրն Օյախաց ի քաղաքն Ալրաթ ի սուրբ Աս-տուածածինն յեկեղեցին. ի կաթողիկոսութեան տեառն Փիլիպոսին. ևւ ի Թաղաւորութեան Վասիլ պարոնին. եւ Խոստանողութեան աէր Մինասին. որում (շարու-նակութիւնն ալ զբոլ) Տէրն զկեանս յաւիտենականս պարգեւեացէ. ամէն :

Իսկ իրրեւ ազդս Հայոց ի Պուրտանայ երկրէն եկին ի Լէհաստան, նոյն խոճայ Թուսանն ևւ որդիքն իւր զոյն Աւետարանս պարզեցին Եկեղեցւոյս Ստա-նիսլաւովու յիշատակ իւրեանց յաւիտենական : 1706-Ստեփաննոս Ռուքա, Տէրան Ստանիսլաւովու :

5 (28).

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

ՉՂԳ = 1344 :

ԹՈՒՂԹՔ՝ (Պ) — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 13×8.8 հմ. — ՆԻԻԹ՝ Բուղբ. — ԳԻՐ՝ բոլորգիր. — ԿԱԶՄ՝ կաշի. — ՀԱՆԳԱՄԱՆՎ՝ տեղ տեղ մաշած, բոսղիւր զրեթէ ամբքեռովի. — ԿԻՍԱՆՈՐԱՆԻՐ՝ կամ, զու-նագարդ. ԼՈՒՍԱՆՈՐԱՆ՝ Եւ ՆԵՂԿԱՆԻՐ՝ կամ

յաճախութեամբ. — ՍԿԻՆՆԱՏԱՐԿ՝ կարմրագիր. Մաքրամկարչութիւնը միջակ յաջողութեամբ. — ԳՐԻԶ՝ Թարոս Սուքիսեան. — ՏԵՂԻ՝ Սուրխար. — ԺԱՄԱՆԱԿ՝ 1344 :

Մատենան է Շարակնոց :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Փառք ամենասուրբ երրորդու-
թեանն յաւիտեանս. ամէն :

Գրեցաւ եղանակաւոր տառս ի թվականութեան
ՁԶԳ. ի հայրապետութեան տեսնն Մրիթարայ եւ ի
թագաւորութեան Կոստանդեայ ըրեպաշտի. ի քա-
ղաքս ի Սուրխաթ, ընդ հովանեան սուրբ Աստուա-

ծածնիս. ձեռամբ ըրեպաշտեալ թորոսի Սուրխասնց
ի վայելումն... (դատարկ) եւ յիշատակ հոգւոյ :

Արդ աղաչեմ զամենեանս որք հանդիպիք ամա
եւ տարազաւ ինչ աւղտութեան յիշեցիք ի Քրիստոս
ղոստացող սուրա... (դատարկ) եւ զբաղմամեղ զրիչս
ղթորոս եւ զծնողսն իմ : Եւ Քրիստոս յիշողացդ եւ
յիշելոցս ողորմեսցի. ամէն :

Ակիցրը պահպանակ թղթի վրայ. «Այս շարական
է պատուելի տէր Նիկոլին :

6 (29).

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Ց

ՌՃԻԹ = 1680

ԹՈՒՂԹՔ՝ 284 : — ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 30,2×20 հմ. :
— ՆԻԻԹ՝ քուղր : — ԳԻՐ՝ մուր-շղագիր : — ԿԱԶՄ՝
փայտեայ կաշեպատ, այժմ քայքայուած : — ՀԱՆԳԱ-
ՄԱՆՔ՝ քրքուած, տեղ տեղ քղթեր ինկած. այժմ կը
պակսիմ էջ 1—63, 80—81 : Զարդագրեր, քոչնագրեր
եւ յուսանցագրեր կան : — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր :
— ԳՐԻԶ՝ Միքայել(1) երէց Միքայելեց : — ՏԵՂԻ՝
Լվով (²) : — ԺԱՄԱՆԱԿ՝ 1680 :

Մատենան է Շարակնոց, խաղաղրեայ :

1. էջ 64—636 : Սկիզբէն ինկած 1—63
էջերը : Այժմ կը սկսի Ս. Անտոնի Օրհնու-
թեան քաղուածքներէն :

2. էջ 637. Շարական Խոտաճարական
ստացեալ վարդապետին Յոհաննիս : Յաւուրց
վերջին ժամանակաց... :

3. էջ 638. Շարական սրբոց աւետարան-
չացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկասու եւ
Յոհաննու : Կարդալովամբ սուրբ Հոգւոյն
աշակերտեալ Քրիստոսի... : Տունք՝ ԿԻԻ-
ՐԱԿԱՆ :

4. Կանոն ի սուրբ երրորդութիւնն եւ
Ամենայն սրբոց, Լ. առաջն սուրբ Հոգւոյն :
Յերիս անձինս ըստանալ եւ մի ընտելին
" հասեալ... : Տունք՝ ՅՈՀԱՆՆԷՍ ՈՐ ԷՐ :
ՏՆ՝ Թ. 9, 54 :

5. էջ 641. Այլ հարց Աւետեաց Աստուա-
ծածնին որ յիննանց. Ռուբիս լեր Մարիամ
սուրբ Աստուածածին... :

6. էջ 641. Կանոն թէ յորոքսի զօրա-
վարի : Որ ի հանդէս մեծ ճգնութեան արիա-
րար պատերազմեալ... :

7. էջ 642. Կանոն Ս. Գրիգորի Լուսա-
ւորչին. օրհնութիւն մուտն ի վերայն : Որ
յանձնաւորի փառաց միածնէն ||| (թուղթ
ինկած) :

8. էջ 643. (Ժամամուտք) : ա. Սուրբ
Աստուածածնայ եւ ամենայն Սրբոց : Աս-

տուածածին ամէնօրհնեալ զպաղատանս մեր
ընկալ... :

Բ. Խաչի. Գովեալ եւ զոս փայտ վրերկու-
թեան... :

Գ. Առաքելոց : Երկոտասան սուրբ ա-
ռաքեալք... :

Դ. Մարգարէից : Էին ընտրեալ Բանին
կենաց... :

Ամրոցն ի միասին մէկ տաղ Ա—Բ տու-
ներով :

9. էջ 646. Տաղ Նոր կիւրակի : Այսօր
նոր յարեւ ծագեալ ի նորահաշ յարե-
ղակնէ... :

10. էջ 646—650. Կանոնադրութիւն :

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 363. Ծնորհօք Տեսնն մերոյ
Յիսուսի Քրիստոսի յանկ ելեալ աւարտեցաւ ի Լվով
քաղաքն տառս երաժշտական եւ քաղուաց կոչի օրհնու-
թեանց տօնից տէրունականաց եւ ամենայն սրբոց,
յոտ իւրաքանչիւրոց պատշաճից, ձեռամբ մեղաւոր եւ
անարժան ճՃ. ԺԺ. ԹԹ. ԴԳ. ԺԵ. ԺԵ. (ՄԻԷԷԷ)
Էրիցու Միքայելէնց. ի ժամանակս տեսնն տէր ին-
նոգէնցիոսի Հոռմա հայրապետին. եւ ի կաթողիկո-
սութեանն Հայոց տեսնն տէր Յակոբին. եւ առաջ-
նորդութեանն տէր Նիկողայոսի թորոսեանց, արքե-
պիսկոպոսի Լովու, Կամենեցու, Զամաչայեու, Եւպ-
րովայու. եւ ամենայն քաղաքաց ի զմէի (թէմի) նորին :
Եւ ի թագաւորութեանն երբորդ Յովաննիսին, ի իվա-
կանիս Հայոց ՌՃԻ եւ Թ. ողոստոս ամուց Գ. օրն
Գչթի, ի տօնի սրբոյն Ստիփան եւ երից զստեղաց նո-
րին՝ Պիատոսի եղբորս եւ Ագապի ի վայելումն ան-
ձին իմոց եւ որդւոց իմոց, ինդրեմ ի ձեզանէ, Էյ-
րայրք, ով ոք կարգացէ սոս Ծորակնոցիս վերա՝
կամ բարուսցիս, մի ձանձրացի յիշել միով Հայր
մերով. եւ վստն այդ Հայր մերիս Տէր Աստուած ողոր-
մեսցի նոցա ի միասնեալ իւր զալստեան. ամէն :

7 (30).

Ժ Ա Մ Ա Գ Ի Ր Ք Ե Ի Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

ԺԵ. դար:

ԹՈՒՂԹՎ՝ էջ 401+311+74: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 12X8,3 հմ.: — ՆԻԻԹ՝ քուրք: — ԳԻՐ՝ մուր: — ԿԱԶՄ՝ առանց կողի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լա: — ԴԱՏԱՐԿ՝ թղ. 6ր (գրչափսճեր): — ԽՈՐԱՆՆԵՐ՝ չուճի: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ շատ ցանցառ: — ԽՈՐԱ-ԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ ԵՒ ՏԵՂԻ՝ անձաւոր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ. դար:

Մատենան է Երեքմասնեայ, ի միասին կազմուած՝ Ժամագիրք և Շարակնոց և Տոնացոյց: Ա. թղ. 1ա Ժամագիրք. սկզբէն պահաս. այժմ կը սկսի. թղ. 1ա—հա. Կանոնագրու ըստ կարգի (այլ գրէ՛լ չղագիր):

Թղ. 7ա (Հոս իջաճամարով էջ Գ—ՆԱ) Գիրչեային ժամ, նոսր-չղագիր գրով: Առաջին Սաղմոսին՝ «Տէր զի բազում հղեն» ի սկիզբը ինկած. այժմ կը սկսի. «Մտցեն ալօթք իմ առաջի քո Տէր...»:

էջ ՆԱ. Հանդստեան ժամին կատարածին. Աղօթք առ ամենաորրորդի կոյսն Մարիամ.

Ով Մարիամ սրբուհի կոյս,
Որ ծնար ըղձէրն մեր և կոյս.
Զյաղթանակողն Զարուդոնի,
Զնորդողն յաւիտենի (այսքան):

Բ. Շարակնոց. էջ 3—314. սկզբէն թուղթ մ'ինկած. գրչութիւնն մանր նոսրագիր. այս մասը առանձին իջաճամարուած է գրէ՛լ: Այժմ կը սկսի. «Կովէն զոյսն ի չօրէ

յաւուր ծննդեան լուսոյ մօրն... (մասն «Երգեցէք» չարականին):

էջ 295 և էջ 296. «Քաղաւաք օրհնութեանց տօնից տէրունականաց և ամենայն սրբոց ըստ իւրաքանչիւրոյ պատշաճից:

Գ. Տօնացոյց. այլ գրէ՛լ՝ նոսրագիր, էջ 1—42. կը սկսի. Ի՛. Գեկտ. Ճրագայոյց Խննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Օհ. ԲՁ. Ուրախացիր...: Ի կատարածին կայ ծանօթութիւն. «Զայս տօնս մի ոք իշխեսցէ խափանել, զի մինչեւ դայսօր ի տղիտութենէ էր խափանեալ, և բազում քննութեամբ և գիտութեամբ եկն ի լոյս: Իսկ որ լրի եւ հակառակի, պատասխանի տալոց է առաջի Աստուծոյ: Մեր անպարտ եմք: Փառք Աստուծոյ, զի ճշմարիտն յայտնեցաւ:

էջ 43—60. ցուցակ Ա. Խօթները եկաց:

էջ 61—67 (խաղանիշ). ի տօնի ամենասուրբ Երրորդութեան: Որհ. ԴԿ. Յերիս անձինս բաժանեալ, և մի բնութիւն ոչ գտեալ, Երրորդութիւն պաշտելի, Հայր և Որդի և սուրբ Հոգի... (Կանոնիս սկզբնապաշարը կը հիսեն. ՅԱԶԱՆԵՍ ՈՐ ԵՐ ԱՐՓԱՆԻ ԽՆԻՐԵԱՆ: ՀԵՂԻՆԱԿՆ Է ԳՐԻԿՈՐ ԱՆԱԼԱՐԿԵՅԻ (տե՛ս Թ. 9, 54):

էջ 68—74 (խաղանիշ). ի տօնի ամենասուրբ մարմնոյ և արեան Տեառն: Գերաճաշ, խորհրդոյ, անգին արեան և մարմնոյ...: Տօնին ամբողջ կանոնը. վերջին թուղթին անկումով՝ այժմ կը պակսի Համարածի վերջին տունը (տե՛ս Թ. 8, 55):

8 (31).

Շ Ա Ր Ա Կ Ն Ո Յ

ԺԵ.—ԺԶ. դար:

ԹՈՒՂԹՎ՝ (*): — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ (*): — ՆԻԻԹ՝ մագաղաթ: — ԳԻՐ՝ քոյրգիր: — ԿԱԶՄ՝ ՈՐ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ սկզբէն և վերջէն քղբեր ինկած. տեղտեղ պատահատու. այժմ խմբով ընդգում: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԿԵՐ. ԶԱՐԴԱԳՐԵՐ՝ կամ տեղտեղ: — ԽՈՐԱԿԻՐՔ, ՍԿԶՐԱՏՈՂՔ՝ կար-

միր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԵ ԺԶ դար: — ՏԵՂԻ ԵՒ ԳՐԻՉ՝ անձաւոր: — ՍԵՊԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ Քաղաւաքում մը 140 համարով:

Մատենան է Շարակնոց, այժմ թերակատար: ՎԼԵՂԻՆ ԹՂԹԻ ՎՐԱՅ ԱՐՃԱՆԱԳՐԱԾ Է. Ex libris D. Alexandri Azołowski, Leopoli.

9 (32).

ԵՐԳԱՐԱՆ

1783:

ԹՈՒՂԹՔ՝ 82: — ՄԵՍՈՒԹԻՒՆ՝ 21,6×17-3 հմ: — ՆԻԽԹ՝ քույր: — ԳԻՐ՝ անու: — ԿԱԶՄ՝ կիսա-լար: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կար-ւիք: — ԳՐԻՉ ԵՆ ՏԵՂԻ անժամօք: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1783:

Մատենան է՝ «Տեառ Հատարակութեն կո-չեցեալ Երգարան դոման» նորադէտ շարա-դրեցեալ Էրզն գիշերայնոյ ժամուն, շարա-կանս, մեսեգիս, և սոցին նմանս, առ ի լըցումն պակասութեանց ժամադրքոյն, Շա-րակնոցի, և այլոց առ աստուածային պաշ-տօնն հարկաւորաց զրեանց: Պարունակող ի փառս մեծադոյնս Աստուծոյ, և սրբոց նորա, և ի յօդուտ սրբարկածն աղօթատիրաց ընդ-օրինակեալ յամի ներմարմնութեան բանին 1783 և ի թուարեութեան Հայոց ՌՄԼԻ»:

1. էջ 1. Վերալցումն ոմանց երգոյ, շա-րակնաց, մեսեգեաց, որք ի Շարակնոցի և ժամադրքի նուազք դասնին: — Ի ճրագա-լուցի Ծրնընդեան Տեառն, զկնի Չարթու-ցեալքին: Երգ: Հայրն զըթած անդուգա-կան, լնու դոպման վերադնութեան... (ընդ ամէնը՝ 4 տուն):

2. էջ 2. Ի ճրագալուցի Ծրնընդեան Տեառն: Դու ԲԼԹՂՀՀՃ, տուն Եփրատայ, Ձես ինչ կիրտսեր յիշխան Յուզայ...:

3. էջ 3. Ի տօնի Ծրնընդեան Տեառն. զկնի Չարթուցեալքին երգ. Անմայր ծրնունդ Հօր անսկրպան, նկտապիր և կերպա-րան...:

4. էջ 4. Առաւօտու Էրգ յատուկ: Այսօր ծընաւ որ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանն Որդի... (մեսեգի):

5. էջ 5. Քարոզ (գանձ). Ժողովեալքս ի տաճար փառաց սրբութեանդ քոյ Հայ-ցեմք...:

6. էջ 7. Տող զԾրնընդեան Տեառն: Մա-նուկ ծրնաւ ի ԲԼԹՂՀՀՃ, ուստի ցրնծայ Երուսաղէմ...:

7. էջ 8. Ի տօնի Թլփատութեան Տեառն. զկնի Չարթուցեալքին երգ. Ի յրգկրգրան անօրէնութեան յաթկրորդում առ ի ծնըն-դեան...:

8. էջ 9. Ի տօնի Աստուած յայտնութեան Տեառն. զկնի Չարթուցեալքին երգ. Յնծա-ցուք արդ ամենեքեան, արք և իղունք հա-մանգամայն...:

9. էջ 11. Ի Կիրակի Մաղկաղարդին: Ու-րախ լեր դուտորք Սիօնի, պատրաստեալ ցարդ առադաստի...:

10. էջ 12. Ի մեծի Հինգշաբաթու: Այսօր զըրաւ օրինակաց հնոյ կրտակին և օրի-նաց...:

11. էջ 14. Ի մեծի Ուրբաթու: Գուշա-կութիւնք տեսանողաց նախանցելոցն օրի-նաց...:

12. էջ 16. Ի մեծի Շաբաթու: Կենդա-նատուն ամենեցուն մեռանի վասն ամենե-ցուն...:

13. էջ 18. Ի Կիրակի Չատկին: Յարեալ Բրիտոս ի մեռելոց նախկին պըտուղ նըն-ջեցելոց...:

14. էջ 19. Ի տօնի Համբարձման Տեառն: Յետ փառաւորի յարութեան և ի լրման սնո-րէնութեան...:

15. էջ 20. Ի Կիրակի Պէնտէկոստէին: Ամենասուրբ Աստուած հոգի, տնօրէնութեան քում կալցի...:

16. էջ 22. Ի տօնի ամենասուրբ Երրորդ-դութեան: Սրբազնասուրբ Երրորդութիւն, երբեակ և մի աստուածութիւն...:

17. էջ 23. Ի տօնի Մարմնոյ և Արեան Տեառն: Արդ օրհնեցուք ամենեքեան, և գովեցուք միաբերան...:

18. էջ 24. Ի տօնի Այլակերպութեան Տեառն: Յայտնէ Յիսուս աշակերտաց զոյայ-ծառութիւն իւրոց փառաց...:

19. էջ 26. Ի տօնի Ս. Խաչին: Ի սիրդ-րանէ նախատեցելր զխորհուրդ խաչին ա-յաջողքեր...:

20. էջ 27. Ի տօնի Եկեղեցոյ: Չուար-ճացիր հարսն Բրիտոսի, կաթուղիկէ եկե-ղեցի...:

21. էջ 28. Երգք ի տօնս սրբուհոյ Աս-տուածածնին: Ի տօնի մաքրեցութեան: Մի-այն մաքուրդ ի մէջ կանանց, փութաս մաք-րիկ կերպիւ կանանց...:

22. էջ 29. Ի տօնի Աւետման Ս. Աս-տուածածնին: Աղերս քո, ով կոյս սրբա-յկեաց...:

23. էջ 31. Ի տօնի Այլակերպութեան Ս. Աս-տուածածնին: Անհամեմատ խոնարհութիւն սէր քո և Խաչող տղութիւն (ա՛յսպէս)...:

24. էջ 32. Ի տօնի Վերափոխման Ս. Աս-տուածածնին: Վերնականացն տենչ վա-ռաց...:

25. էջ 34. Ի տօնի Ծննդեան Ս. Աս-տուածածնին: Մաղկեցաւ արդ արմատն Ես-սեայ...:

26. էջ 35. Ի տօնի Ընծայման Ս. Աստուածածնին: Ընտիր նըէր Երրորդութեան...

27. էջ 36. Ի տօնի Անարատ Յղութեան: Յաւիտենից Աստուած բնարեաց...

28. էջ 38. Հասարակ Երգ կիրակէից: Անբակիրն Աստուած ամենից բակիրն...

29. էջ 39. Ի տօնի Ս. Հրեշտակապետաց: Դոսք իննեկէ հոգեղինաց...

30. էջ 40. Հասարակ երգ Առաքելոց: Նախ քան զբակիրն արարածոց...

31. էջ 42. Երգ Ս. Առաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի: Կաթուղիկէ եկեղեցի, զընծայ այսօր ի հանգիսի...

32. էջ 43. Հասարակ Երգ մարդարէից: Նախընտրեցեալք ի սկզբանէ...

33. էջ 44. Հասարակ Երգ վարդապետաց: Նախաստան կամ Աստուծոյ...

34. էջ 46. Ի տօնի Ս. Պէտրոսի: Յերանկեաց երանոգոյն...

35. էջ 47. Միոյ Հայրապետի խոստովանողի: «ՅՈգոյն սրբոյ նախընտրեցոր»...

36. էջ 48. Բողոք Հայրապետաց խոստովանողաց: Յնծութեան մայն այսօր հեշեալ, յեկեղեցիս ուղղափառաց...

37. էջ 50. Միոյ Հայրապետի մարտիրոսի. Տօնէ այսօր եկեղեցի զօր կատարմանն երջանիկ...

38. էջ 51. Բողոք Հայրապետաց մարտիրոսաց: Փառք եւ պատիւ եւ զօրութիւն...

39. էջ 52. Հասարակ Երգ ճշմարտաց, կրօնաւորաց եւ խոստովանողաց: Ընտրելոց խումբք երջանկաց...

40. էջ 53. Հասարակ երգ Թողաւորաց: Հրաշակերտողը բոլորից...

41. էջ 55. Ի տօնի Ս. Յովսէփայ Աստուածածնին: Յովսէփի սրբի մեծի Դաւթի...

42. էջ 56. Հասարակ երգ Մարտիրոսաց: Ով Երանեալ գունդ վեկայից...

43. էջ 58. Հասարակ երգ Կոստանայ: Եկեղեցի կաթուղիկէ զհանգէս ձեր այսօր տօնէ...

44. էջ 59. Հասարակ երգ սլոց Սրբուհեաց: Ընտիր սրբուհի Քրիստոսի...

45. էջ 60. Ի տօնի Ամենից Սրբոց: Այսօր մայր սուրբ եկեղեցի...

46. էջ 62. Ի յիշատակի համօրէն ննջեցելոց եւ յաւուր Տաղաւարաց: Աստուած զըթած եւ հեշտալուր...

47. էջ 63. Այլ երգ ննջեցելոց որ առի յուրս ուրաթաց ընդ ամի բոլոր: Ամենախնամ Տէր արարիչ, հանուրց աղաւէն եւ յոյս...

48. էջ 65—68. Այլուր, Առաւօտու երգ եւ Մեհեղիք եւ նմանք սոցին, որք ի Ժամագրքում նըապին:

49. էջ 69. Ի տօնի Ս. Գրիգորի Լուսաւորչի Մտանկոյն ի վերապն եւ Ելանկոյն ի վերապէն: Ուրախութեամբ այսօր տօնէ աղան արամեան եւ հըռչակէ...

50. էջ 70. Ի տօնէ Գիւտի նշխարաց Ս. Գրիգորի: Վաշ երջունկութեան արամեանց, զեր սլոց Ասիոյ աղանց...

51. էջ 72. Ի տօնէ Թլփատութեան Տեառն: Օրհնութիւն. Որ խոստացար, Տէր, ի քեզ Արբանշատ զուակղ օրհնել ամենայն երկրի...: Հց. Դկ. (Եւր սարօքն). Անսկիրն Աստուած անանուն բնութիւն... (Տունք՝ ԱՐՔԱՅՆ ԽՆԴՐԵԱՅ ՉՐԱՆՍ): Ճշ. եւ Հք. Կոմաւ յանձն տուր զօրէնս... (Տունք՝ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՍ):

Կոմոնս հեղինակած է Գրիգոր Անաւորդեցի. հրտ. Ս. Վ. Ամատունի, Հին եւ նոր պարսկանոն կամ անվուր շարականներ, էջ 4—6:

52. էջ 75. Ի տօնի սրբուհեաց մօրն Սրբալուրդիկայ: Օրհնութիւն իւր սարօքն: Խնդայ ջաղաքն երկնական տօնախմբութեամբ կուսակրան...

53. էջ 77. Ի տօնի սրբոյ հօրն Պէնէաթի: Օրհնութիւն իւր սարօքն: ՅՈգոյն սրբոյ նախընտրեցեալ, ի պաշտօն Տեառն կուհեցար... (ա՛ս § 35):

54. էջ 80. Ի տօնի ամենասուրբ Երրորդութեան: Օրհնութիւն իւր սարօքն: Յերիս տնձինս բաժանեալ եւ մի բնութիւն ոչ դատեալ...: Տունք՝ ՅՈՂԱՆՆԷՍ ՈՐ ԵՐ ԱՐՔԱՅՆ ԽՆԴՐԵԱՅ:

Կոմոնս հեղինակն է Գրիգոր Անաւորդեցի. հրտ. Ամատունի, անդ, էջ 108—111: Սիրեմէան, Եկաւոր, էջ 70—71:

55. էջ 84. Ի տօնի ամենայնաբեղի Մարմնոյ եւ Արեան Տեառն: Օրհնութիւն իւր սարօքն. Գերահաշ իորհրդոյ անգին արեան եւ մարմնոյ...

Գր. Անաւորդեցոյ. հմտ. Վիեննա, Թ. 803, 27ա: Վատիկ. Թ. 26, 17բ եւն:

56. էջ 87. Ի տօնի Այցելութեան Ս. Աստուածածնին: Օրհնութիւն իւր սարօքն. Օրհնեմք զօրհնելոյ ի կանայս, զկայս եւ զմարդ. ացելեալ... (ա՛յսպէս):

Հմտ. Վատիկ. Թ. 26, 21բ: 27. 20ա: 29, 11ա:

57. էջ 90. Ի տօնի Ամենայն Սրբոց: Օրհնութիւն իւր սարօքն. Անհաղ զօրհնութեամբ հոյր հիմարիկեր իմաստութեամբ...: Տունք Ա—Բ:

Կոմոնս հեղինակն է Գրիգոր Անաւորդեցի. հրտ. Ամատունի, անդ, էջ 145—149:

58. էջ 96. Ի տօնի Ընծայման Ս. Աստուածածնին: Օրհնութիւն իւր սարօքն. Գովաւք զՀայրդ զըթութեան յորս բնդ մարդկան հաճութեան...: Տունք՝ ԳՐԻԳՈՐԻ ԵՐԳՍ ԱՅ(Ս):

Գրիգոր Անաւարդեցւոյ. Հմմտ. էջմ. 732, 3ա—8բ (1322). Վիեննա, Թ. 863, 36ա—37բ. Վատիկ. 26, 30ա:

59. էջ 101. Ի տօնի Անարասի Յղու-թեան Ս. Աստուածածինն: Օրհնութիւն իւր սարօքն. Կարողաբար պօրութեամբ Հայր Հիմնարկեր ընտրութեամբ...: Տունք՝ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԱՐՔԱՅ ՀԱՅՈՑ է ԳՐԻ(գործի):

Գր. Անաւարդեցւոյ. Հրտ. Սիւրմէան, Նկարա-դիր, էջ 51—52:

60. էջ 105. Շարական Ս. Յովսէփայ Աստուածաճօրն. Մկ. Հր. Պարծանք տուծին Արրահամու...:

61. էջ 105. Շարական Ս. Գայեղանոսի. Մկ. Հր. Պրտակացեալ Հարսին Աստուածորդւոյն, եկեղեցւոյ փառք վեհագիտակ...:

62. էջ 105. Շարական Ս. Լաւրէնցիոսի. Մկ. Հր. Քաջ Նահատակ Բրիտոսի Ս. Լաւրէնցիոս...:

63. էջ 106. Շարական իոստովանողաց. Յիսուս սրբակ քոց սրբոց...:

64. էջ 107—126. Պաշտօն Նընջեցելոց (բաղուածք Շարականոցէն):

65. էջ 127—163. Լիթանեայք զանազանք ըստ ժամանակի տեսլիք:

ա. Յաղագս ամենասուրբ Անուանն Յիսուսի:

բ. Առ ամէնօրհնել կոյսն Մարիամ Աստուածածին (էջ 130):

գ. Առ սուրբ Հայրն Պէնէտիքթոս (133):

դ. Լիթանիայ Ամենայն Սրբոց. Կից աշօթենէր (137—144):

ե. Լիթանիայ վասն Մեռելոց (145):

զ. Լիթանիայ առ Ս. Պահապան Հրեշտակն (148):

է. Լիթանիայ առ Ս. Յովսէփ (153):

ը. Լիթանիայ յաղագս Ամենայնաբարկ Սրբազնութեան (155):

բ. Լիթանիայ առ Ս. Աստուածածինն ի սրբոց գրեանց (159):

ժ. Molitwa do S. Wawryńca (163) եւ այլն:

10 (33).

ԵՐԳԱՐԱՆ

1785:

ԹՈՒՂԹԻՔ՝ 161: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 17.5 × 11.5 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ԳԻՐ՝ նոտրպիր: — ԳՐԻՉ ԵՒ ՏԵՂԻ՝ ամծանօք: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1785:

Մատենա է. Երգարան զնորոգապէս շա-րագրեցեալ Երգս տօնից տէրունականաց ա-մէն Երանուհւոյ կուսին եւ այլոց սրբոց, որք ի գիշերայնում ժամու կանոնականում փո-խանակ երգոցն Առաւօտ լուսոյ եւ Աշիարհ ամենայն ասին, ըստ եղանակի այնր Երգոցն,

որ սկզբնաւորի Աստուածածին ամէնօրհնեալ զաղապատանա մեր, պարունակող ի մեծազոյն փառս Աստուծոյ եւ սրբոց նորա փոքրաշխատ գրչութեամբ ընդօրինակեալ յամի ներմար-մնութեան Բանին Աստուծոյ 1785:

Ձեռագիրս կը գտնուի Համայնարանի Գրատան Թ. 989 տակ. զոր եւ չկրցայ տես-նել. վերոյիշեալ տեղիքները յառաջ բերած եմ Փ. Մակլերէ REA 7 (1927), էջ 134—135: Արտագրուած ըլլալու է նախորդ ձեռագրէն, ուստի եւ բովանդակութեամբն՝ նոյն:

11 (34).

ԺԱՇՈՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ

ՌՃԻՁ = 1677

ԹՈՒՂԹԻՔ՝ 370: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 32.3 × 20.2 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք, հաստ եւ ողորկ: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկխմ: — ԳԻՐ՝ բալորղիր: — ԿԱԶՄ՝ փայ-տեայ կանաչ քաւիշով պատուած. ժամանակաւ կոտո-ղում, այժմ արծաթեայ մասերէ կազմաւորուած: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ կուգմալոյ, շատ ցեցակեր: Թղթայ պաշտանակները խմբաւորեցէ վնասուած: — ՆԿԱՐՔ՝ հակասիմ Ս. Ոնոփրիոսի յաջող պատկերը, ներկայու-

ցուած ամպերու վրայ ծերադիր, մագերով եւ ռօրու-նով ծածկուած. տակը վահանակ մը, գոր բռնած եմ Երկու երեշտակներ, մէքը գրչին 10 տող յիշատակա-րանք: — ԿԻՍԱՆՈՐԱՆՔ՝ էջ 1 եւ 188: — ԼՈՒՍԱՆ-ՅԱԶԱՐԴԻ ԵՒ ԾԱՂԱՎԳԻՐԻՔ՝ մեծ քուղով, երկգոյն: Ազուցուած կան երկու տպագիր սեւաղիր պատկեր-ներ, մին (էջ 168) «Անա Այրդ». եւ Երկրորդը Յիսուս մանուկ, խաչը ձեռքին (էջ 179): — ԳՐԻՉ՝

Ոճոփրիսս կրօնաւոր: — ՏԵՂԻ՝ ԼՂՈՎ: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1677: — ՍԵՊԷԱԿԱՆՈՒԹԻՒՆ՝ ԼՂՈՎԻ ՀԱՅՈՑ ԱՐՖԵՅԻՍԿԱՅԱՍԱՐԱՆԻ:

Մատենան է՝ Ճաշոց եւ Խորհրդատետր Լեհահայոց:

Ա. էջ 1—20. Ծննդեան ճրագաւոյցի ընթերցումը:

էջ 22—64. Կանոն ջուր օրհնելոյ յաւուր Յայտնութեան:

էջ 64—668. Ժամամուտք եւ ընթերցումը:

Բ. (ընդ մէջ 188/189ի ազուցումը). էջ 1—26. Խորհրդատետր: Լուսանցքի վրայ կը տեսնուին տեղիս տեղիս մանր բնագրական սրբագրութիւններ:

Գ. էջ 1—10 (ընդ մէջ 358/359ի ազուցումը) Կանոն նշան հաստատութեան յետ երկոցունց հաւանութեանց (այն է՝ Կարգ պսակի, հանդերձ օրհնութեամբ Մատանոյ, Հալաւի եւն): Պսակելոց ուղղումը հարց-

մունք եւ պատասխանիք եւն (էջ 3ք—4ա) հայագիր լեհերէն էն:

Դ. էջ 668—671. Ճանապարհորդական աղօթք:

Սկիզբը պահպանակ թղթի վրայ մեծ չղագրով գրուած «Երբ վասն մեռելոց», 19 տուն, Dies illa, dies irae երգին թարգմանութիւնը:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Զեռագրիս ճակատին ներկայացուած պատկերին տակ, վահանակի մէջ կը կտրուանք, գրուած ըստ մեծի մասին փակագրերով եւ ռսկեջրով:

Պատարագամատոյց

ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ

օգնութեամբ ||| (փակագիր) գտող.

ի ձեռն աշխատանաց

Տէր Օնոփրիսս կրօնաւորի (փակագիր).

Պր. Ասլանին որդւոյ

յամի Բանին Աստուծոյ ՌՈՀԷ. Եւ ըստ

Հոյկադեան սերի

ՈճԻՉ. Օգոստոսի

կատարեցաւ:

12 (35).

ՃԱՇՈՑ ԵՒ ՊԱՏԱՐԱԳԱՏԵՏՐ

ԺԸ. դար.

ԹՈՒՂԹՔ՝ 189: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 25,7 × 18,6 հմ. — ՆԻՒԹ՝ բուղբ: — ԳԻՐ՝ բաղրգիր: — ԿԱԶՄ՝ Կաշեկագմ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — ԽՈՐԱՆՆԵՐ, ԿԻՍԱԽՈՐԱՆՆԵՐ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ ԵՒ ՍԿԶՐԱՏՈՂՔ՝ կարմիր: — ԳՐԻՉ՝ Տեղի եւ ԺԱՄԱՆԱԿ՝ անծանօթ. հաւանօրէն ԺԸ. կամ ԺԹ. դարէն:

Մատենան է՝ Ճաշոց-Պատարագատետր:

1. Թղ. 1—148. Ճաշոց:

2. Թղ. 149—196 դուրս հանուած է. այժմ ազուցումը փոխարէն 1885ին ի վիճիւնս տպուած խորհրդատետրն վասն Լեհահայոց:

13 (36).

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԼԵՀԱՂԱՅՈՅ

1725:

ԹՈՒՂԹՔ՝ 52: — ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 38 × 25,8: — ՆԻՒԹ՝ բուղբ: — ԳԻՐ՝ բաղրգիր-շղագիր: — ԳՐՉՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ յաթակագմ, բարձրաբանակ բաճաւածքով: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ յաւ: — ԶԱՐԴԱԳԻՐ՝ խաղաղաւ: — ԳՐԻՉ՝ Քրիստոսիոր Ֆառուհեմց: — ՏԵՂԻ՝ (Լէօպոյիս): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1725:

Մատենան է՝ Պատարագամատոյց ըստ արարողութեանն եւ ծիսի եկեղեցւոյ Հայոց:

Գրեցեալ ի Քրիստոսիորէ Ֆառուհեմց: Anno Domini 1725, die 21 martij:

Թղ. 2ա. Պատարագ յատուկը ըստ ժամանակի, որք սկսանին ի Ծննդենէ ի տունի Ծննդեան Յիսուսի Քրիստոսի: Ետայի Ը. Մանուկ ծնաւ մեզ... (Ընթերցումը եւ Աւետարանը եւն):

Թղ. 9—32. Կարգ պատարագի ըստ Հայաստանեայց եկեղեցւոյ (ըստ կերպի Լեհահայոց):

Թղ. 33—34 (ուրիշ գրչէ). Չորս Աւետարաններու սկիզբի մասերը, թափորի ժամանակ կարդալու համար:

Թղ. 35—48. Ծաշոցի մասեր յետ Յարութեան շրջանի:

Թղ. 49ա. Oratio post missam:

Թղ. 50ա (նոր, չղաղիր). Կարճ շնորհելոյ ի քահանայապետէ Հանդիսաւորապէս հըրչակելոյ ղներողութիւն քառասուն աւուրց:

14 (37).

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՑՈՅՑ ԼԵՂԱՂԱՅՈՅ

ՌՃՁԱ = 1732:

ԹՈՒՂԹՔ՝ (*): — ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 31 × 19 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԳՐԶՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: — ԳԻՐ՝ Ետար: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ՋԱՐԴԱՊԻՐՔ՝ պարզ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ ամծածօք: — ՏԵՂԻ՝ Քուքերու Բաւալ (Քուքի): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1732:

Մատենա է՝ Խորհրդատետար կամ Պատարագամատոյցս ըստ ծիսի Հայոց եկեղեցւոյ, գրեալ ի Քուքերու քաղաքն յամի Տեառն 1732. Եւ Հայոց Թվականիս ՌՃՁԱ. Յուլիսի: Ստեփանոս Միքայելիչին է:

Թղ. 1ա. Պատարագամատոյց (ըստ կերպի Լեհահայոց). Կից ծաշոց:

15 (38).

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՑՈՅՑ ԼԵՂԱՂԱՅՈՅ

1742:

ԹՈՒՂԹՔ՝ 200: — ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 33,3 × 20,2 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐՔ՝ քգ. 182—200: — ՋԱՐԴԱՊԻՐՔ՝ պարզ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ Տէր Քրիստափոր Ֆառուխեանց (*): — ՏԵՂԻ՝ Լեպոլիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1742:

Մատենա է՝ «Պատարագամատոյց կամ Խորհրդատետար ըստ ծիսի եւ արարողութեան եկեղեցւոյս Հայոց. յորում ընթերցուածք եւ աւետարանք տօնից եւ սրբոց մանաւանդականաց յատկապէս գրին արդեօք իսկ այլոց սրբոց որոց եւ իցեն սեռի հասարակօրէն վասն համառօտութեան: Տրամադրեցեալ է,

կարգաւորեցեալ Հոգունականօրէն յամի ներմարմնութեան Բանին 1742, նոյեմ. 29: ի Լէօպոլիս»:

1. էջ 125—156. Պատարագամատոյց:

2. էջ 3—124, 157—355. Ծաշոց:

3. էջ 356—357 (այլ գրչէ, նոտրադիր). Պատարագ զսուրբ Յովհաննէ Նեմորուճէնէ կանոնիկոսէ Գրակացւոյ. Մայիսի ԺԶ:

4. էջ 357—359. Պատարագ զսրբուհւոյն Մարիամու Մաղդաղինացւոյն. Յուլիսի ԻԲ:

5. էջ 360—366. Ցանկ պատարագաց:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. էջ 355. «Տէր Քրիստափոր Ֆառուխեանց», հաւանօրէն գրէր:

16 (39).

ԽՈՐԱԳԻՐՔՆԵՐ ԼԵՂԱՂԱՅՈՅ

1801:

ԹՈՒՂԹՔ՝ 94: — ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 38,7 × 25: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ ամծածօք: — ՏԵՂԻ՝ Լեպոլիս (*): — ԺԱՄԱՆԱԿ՝ 1801:

Մատենա է՝ Սրբազնասրբոյ Խորհրդոյ պատարագի մատուցատետար ըստ եղանակի պաշտաման քահանայապետականի. փոքրաշխատ գրչադրութեամբ ընդօրինակեալ յամի ներմարմնութեան Բանին Աստուծոյ 1801:

1. էջ 3—38, 141—188. Ճաշոցի մասեր:
2. էջ 39—46. Նախապատրաստութիւն առ սուրբ պատարագն ըստ հոռնէակաբնի Միսային, ի դիպող ժամանակի առնելի:

3. էջ 47—140. Պատարագամատոյց Լեհահայոց:

ԼԿ
17 (39).

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑ ԼԵՀԱՀԱՅՈՑ

ԺԸ. դար.

ԹՈՒՂԹԳ (*): — ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 34 × 21,5: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԳԻՐ՝ մատր: — ԿԱԶՄ՝ կաշեկազմ: — ՀԱՆԳԱՄԱՆԳ՝ քայքայեալ: — ԳՐԻՉ, ՏԵՂԻ ԵՒ ԺԱՄԱՆԿ՝ անծանօթ. քուի ԺԸ. դարէ:

Մատենան է Պատարագամատոյց Լե Ճաշոց Լեհահայոց:

ԿԴ
18 (40).

Գ Ի Ր Զ 2 Ե Ռ Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ՋՀԱ = 1522:

ԹՈՒՂԹԳ՝ 128: — ՄԵԾՈՒԹԻԻՆ՝ 20,5 × 15,3: — ԳՐԶՈՒԹԻԻՆ՝ երկսիւն: — ՆԻԻԹ՝ հաստ ողորկաւած քուղք: — ԳԻՐ՝ մեծ բոլորգիր: — ԿԱԶՄ՝ փայտեայ, կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆԳ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ քղ. 1—2, 126—128. քղ. 33, 76 մորոգուած: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ քղ. 3, 34, 54ք, 76ա, կարմիր ԵՒ սեւ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴԵՐ ԵՒ ԶԱՐԴԱԳՐԵՐ՝ քղ. 3, 28, 34, 39, 40ք, 42, 43, 54ք, 76ա: — ԳՐԻՉ՝ Մկրտիչ կրօնաւար: — ՏԵՂԻ՝ իշով: — ՍՏԱՑՈՂ՝ Գալուստ արքեպիսկոպոս: — ԺԱՄԱՆԿ՝ 1522: — ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՆ՝ Լվովի Հայոց Արքեպիսկոպոսարանի:

Մատենան է Ձեռնադրութեան դիրք, Դր. Տաթեւացոյ խմբագրութեամբ. «Մահմանադրութիւն դաստիարակութեան նորածնելոց մանկանց, որք հրաւիրելոց իցեն յաստիճան քահանայութեան. հարկաւորք ԵՒ պիտանիք. արարեալ մեծ վարդապետին Գրիգորի հռետորի»:

Գրուածքիս մասին մանրամասն տե՛ս Տաշեան, Ցուցակ Հայ. Ձեռ. Միւթ. Մատենադարանի, Թ. 25 (Ցուց. 144—145):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԳ. 1. Թղ. 124ա. Փառք անհաս վեհի, անկարօտ հօրի, անբաւ մեծի, աննիւղ բարեւարի, Հօր անսկզբնականին, Որդւոյ սկզբնակցին, Հոգոյ դոյաւցին, ապէնիւղ արարչին, ամէնից փրկչին, բոլորից ազատչին, Հօր կամեցողին յաւիտեանս. ամէն:

Ով մանկուէք նոր Սիրունի
Եւ Հայրապետքն պատուելի,
Որ էք պատրաստ եկեղեցի,
Փառաբանիչ էք Բրիստոսի,

Որ Հանդիպէք այսմ տառի,
Կամ կարդալով աւրինակի,
Ձի դուք էք քաղցր Եւ Հեղ ոգի,
սուրբ Եւ մաքուր յամենայնի.
Դուք Հրեշտակաց էք նմանի,
Եւ աւրինակ էք Բրիստոսի.
Լուսոյ նման էք գերարբի,
աղ Համեմիչ էք պիտանի.
Դուք էք քարոզ Տեառն Յիսուսի,
մեղսաքաւիչ ժողովրդի:
Ձեզ աղաչեմ արտասուելի,
ի յոտս անկեալ ձեզ ամենի.
Ձի դուք ներէք ողորմելի,
Մկրտիչիս անպիտանի,
Մեղօք լցեալ ի մէջ տղմի,
Կամ Եւ այրիմ անջնջելի.
Դուք Թողութիւն արէք ինձի,
այս սուտանուն կրանաւորի,
Ձի Տէրն քաղցր է ու ողորմի,
ինձ այս փանաղ Մկրտիչի.
Նոյն Եւ ձեզ Տէրն ողորմեացի,
ի զալլատեան սուրբ Միածնի,
Ով Հայրապետքն պանծալի,
Եւ սուրբ քահանայք յեկեղեցի,
Ձեզ աղաչեմ արտասուելի,
յիման տունել զիս արժանի.
Ձի Տէրն ի ձեզ միշտ զթասցի,
յահեղ աւուրն անբեկի:

Գրեցաւ ձեռնադրութեան դիրքըս. ի դաւառիս
Իլով առ դրանն սրբոյ Հաճատկատարի. ի Հայրապետ-
տութեան Տեառն տէր Սարգսի եւ մերոյ արքեպիսկո-
պոսութեան տէր Գալուստի, զբոլիս ստացողի: Եւ ի
Խաղաղութեան մերոյ Ձիկմոնդի: Ձեռամբ աթմար
եւ անիմաստ զծողի Մկրտիչ սուտանուն կրօնաւորի:
Ի վայելումն տէր Գալուստ արքեպիսկոպոսի: Յի-
շատակ իրեն եւ իր ծնօղացն տէր Ստեփաննոս
իր Հօրն եւ մօրն Մարգարտին եւ իր սրբուն Ստե-
փանի: Թիչեցէք զստացողքն սորա, միով Տէր ողոր-
մեաիւ. եւ զիւր ննջեցեալքն զփոխեցեալքն առ Քրիս-
տոս. ամէն: Եւ զիս զկղկլի զբշակս յիշեցէք. եւ
դիմ ծնօղքս զփոխեցեալն առ Քրիստոս. եւ զուր
յիշեալ լիջիք ի պալատն Քրիստոսի. ամէն: Գրե-
ցաւ Թվականիս Հայոց ՋՀԱ. ի Հոռմայեցոյ ամիս

մարտի: Դարձեալ աղաչեմ զձեզ անմեղադիր լըրութ.
զրիս խոշորութեան. կամ սղալանաց, զի կար մեր
այս էր: Աղաչեմ զձեզ զամենեւեան. որք Հանդիպիք
տեսանելով կամ կարդալով կամ օրինակելով, մեղաց
խողութիւն խնդրեցէք ստացողաց եւ զրոյաց. եւ ա-
մէն ասողաց. ամէն:

2. Թղ. 33. Այլ գրով. Բարեխօսութեամբ սրբոյ-
Հոս Աստուածածնին եւ Ովաննու Կարապետին, սրբոյն
Ստեփաննոսի նախայվկային: Ողորմեա ստացողի սորոյ
տէր Գալուստ արքեպիսկոպոսի եւ իւր Հօրն տէր Ստե-
փանոսին եւ մօրն Մարգարտին. եւ իւր որդուն Ստե-
փանոսին: Եւ ծնօղաց նոցին զփոխեցեալն առ Քրիս-
տոս. ամէն:

Դալուստ արքեպ. 1516—1548 (Կամենից, էջ է):

19 (41).

Գ Ի Ր Բ Չ Ե Ռ Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

ՌՂԵ = 1646:

ԹՈՒՂԹՔ՝ 94: — ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 19,7 × 16,3:
— ԳՐԶՈՒԹԻԻՆ՝ միասիւն: — ՆԻԻԹ՝ բարակ եւ ա-
նողորկ քուղք: — ԳԻՐ՝ մաքուր մոտրագիր: —
ԿԱԶՄ՝ մագաղաքապատ, դրաշմեալ շրջանակով. վրան
«1595»: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԴԱՏԱՐԿ՝ 1ա—բ.
2ա, 31ա—32բ, 49բ, 94ա—բ: — ՆԿԱՐ՝ 2բ. նպիս-
կապոս մը զգեստաւորուած, քազ ի գլուխ եւ գաւա-
ղան ի ձեռք, քաղաք մը ի ծուր իջած, ձեռքիմ
բացուած գիրք մը, որուն վրայ կը կարդա-
ցուի. «Տուր ինձ լիզու խրատու»: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝
բղ. 3ա. բազմազոյն: — ԼՈՒՍԱՆՑԱՐԱՐ՝ բղ. 3ա:
— ԳՐԻԶ՝ անձամօք: — ՏԵՂԻ՝ կամէնից, — ԺԱՄԱՆ-
ՆԱԿ՝ 1646:

Մատենան է.

1. Թղ. 3ա—30բ. «Խրատ վասն պաւա-
ղան տալոյ. վարդապետն աշակերտի իւրոյ:
Մեծադոյնն ի վարդապետաց կոչեցէ զայս
ի վարդապետաց եւ արասցեն զիշերապաշ-
տօն: Եւ զիշերապաշտամանն նախ զգեցու-

յաննն միարան եւ մտցեն Եկեղեցի. ասին
չարական՝ Հրաշափառ. եւ զարդարին զգա-
ւաղանն եւ բերցեն արտաքս ասելով չարա-
կան. Գաւաղան զօրութեան. կայով ի ծունկս
աշակերտին արտաքոյ Եկեղեցոյ (°) ի դուրս:
Սղ. Գաւաղան զօրութեան. փիս. Ասաց Տէր.
Ընթ. Եկեց...»:

2. Թղ. 33ա—93բ. Սահմանադրութիւն
դաստիարակութեան (տե՛ս Թ. 18):

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. 1. Թղ. 93բ. Գրեցաւ ի քաղաքն
Կամենից. Թվ. ՌՂԵ. զեկտ. Ը. օրն գշբթի:

2. Թղ. 3ա (այլ դրէէ). «Նիկողայոս Թորոսեց
արքեպիսկոպոս Լեվա Հայոց եւ Պողոտանաց երկրի ա-
ռաջնորդ» եւ փախադիր մը:

Բնադրին մէջ տեղ տեղ մանր սրբադրութիւններ
կան ուրիշ դրէէ (Նիկողայոս Թորոսեց արքեպիսկո-
պոսէ°). այսպէս Թղ. 47բ. Հաւատաճի այս պարբե-
րութիւնը. «Մի անձն, մի դէմ եւ միաւորեալ մի բնու-
թիւն» սրբադրուած ի մի Թրիստոս:

20 (42).

Մ Ա Շ Տ Ո Յ Չ Ե Ռ Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

1724:

ԹՈՒՂԹՔ՝ 35: — ՄԵՄՈՒԹԻԻՆ՝ 30,5 × 19,7
հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԳԻՐ՝ շագգիր: — ԳՐԶՈՒ-
ԹԻԻՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ լաքակազմ, մաշած: —
ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԽՈՐԱԳԻՐՆԵՐ եւ ԽՐԱՏԱԳԻՐ-
ՆԵՐԸ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ 3. Ա. արքեպ. Լեհաստաց:
— ՏԵՂԻ՝ Լվով: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1724:

Մատենան է՝ Ձեռնադրութիւն քահա-
նայից եւ օրհնութիւն մայրապետաց. յամի
Տեառն 1724, օգտեմբերի 16, ի Լեփսոյի:

Էջ 1. Կարգ զխնդուած տալոյ: Առ ի
առնել զխնդուած՝ պարտ է յայնում, զի
իցի՞ դրօշեալ...: Քարոզէ Աւագեբէցն. Միա-

բան աղաչեսցուք...: Աղօթք՝ Տէր մեր նայեաց...: Այսպէս կը շարունակուի փոքր աստիճանաց տուչութիւնը մինչեւ ցքահանայութիւն:

Էջ 35. Յաղագս զգեցման նզովեցացիւ ընդ կանոնօք ամէներանեալ հօրն Պէնէտիքթոսի: Աւուրբ միով յառաջ քան զգեցուցանել զնզովիցեացն...:

Էջ 42. Կերպ դաւանութեան կուսանաց կրօնուհեաց, այսինքն փոփոխութիւն: Յորժամ ոք ի կուսանաց կրօնիւղաց (sic) յետ աւարտման տարւոյն նորեկութեան...:

Էջ 49. Յաղագս օրհնութեան եւ սրբազնացութեան կուսանաց: Օրհնութիւն եւ սրբազնացութիւն կուսանաց պարտի լինել...:

Էջ 66. Լիթանիաք առ ամենայն սուրբս, որք ասին ի ժամանակի օրհնութեանց կուսանաց կրօնեղեաց...:

Էջ 69. Klatwa:

Էջ 71. Յուցագ:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ. Էջ 70. Գրեցաւ ձեռօք Յ. Ա.՝ Արհեստակոպոսի Լեւաց երկրի Հայոց:

¹ Իմացիր՝ Յովհաննէս Ավկուշտինովիչ:

44

21 (43).

ՄԱՇՏՈՑ ԼԵՂԱՀԱՅՈՑ

1728:

ԹՈՒՂԹՔ՝ 127: — ՄԵՇՈՒԹԻՒՆ՝ 28.5 × 18 հմ.: — ՆԻԻԹ՝ քուղք: — ԳԻՐ՝ նոսր: — ԳՐԶՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ԿԱԶՄ՝ կաշեպատ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաշած: — ԽՈՐԱԳԻՐԹ ԵՒ ԽՐԱՏԱԳԻՐԹ՝ կարմիր: — ԳՐԻԶ՝ ամծամօք: — ՏԵՂԻ՝ Լեօպոլիս: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1728:

Մատենան է՝ «Մաշտոց Հայոց ուղղափառաց հրամանաւ գերապայծառի եւ ամենապատուոյ տեառն Յօհաննու Տօբիայ Ավկուշտինովիչի, արհեստակոպոսի Լեօպոլսեցւոյ Հայոց: Սրբազրեալ եւ կարգաւորեալ ի Լեօպոլիս յամի Տեառն 1728, ապրիլի ամսոյ ԺԵ»:

Թղ. 1ք. Շրջաբերական Յովհ. Աւգոստինովիչի, լատիներէն, գրուած յամի 1728, մայիս 15: Հաստատուած 1734ին: Նոյնը նաեւ հայերէն խմբագրութեամբ.

Joannes Tobias Augustinowicz Dei et Apostolicae Sedis Gratia, Archiepiscopus Leopoliensis. et in regno Poloniae, Magnoque Ducatu Lithuaniae, Armenorum, Episcopus Moldaviae ejusdem Nationis, Sanctissimi Domini nostri Papae ejus nominis Aemennii X JJ. Protatus Domesticus, et Assistens.

Cum Liber Ritualis Armeni Մաշտոց vulgariter nuncupati, a Perillastri, et Admodum Reverendo Stephano Stefanowicz Roszka, Sae. Th. Doctore, Missionario Apostolico, Officiali Nostro per Pokutiam, ac Preposito Stanislavoviensi concinnatus, per Theologos a nobis Deputatos revisus fuerit, nihilque Orthodoxae Fidei, ac Bonis moribus repugnans in re contineat, imo cum bono Ordine ceremonias in administratione Sacramentorum una simul cum Informationibus ad mentem Sacrorum Canonum adaptatis sit refertus ac defectibilitates in antiquis

Armenis Ritualibus contentas ob carentiam quarundam necessarium Orationum perassumptas ex Latino Rituali (juxta generalem Regulam, quae Armenis permittit ea, in quibus deficiunt, a Latinis desumere) quasdam Orationes, et caeremonias sufficienter suppleat, et restauret. ideo, ut idem Liber tanquam Maiori Gloriae Dei, et utilitati nostrarum Ecclesiarum apprime inserviens, quantocius ex Typographica Saepia Publicam lucem aspiciat, Authoritate Nostra Ordinaria Licentiam, et facultatem, si ijs, ad quos pritetinet ita videbitur Damus, et concedimus, inequorum Fidem: Datum Leopoli in Residentia nostra Archiepiscopali hac die 15. mensis Aprilis, Anno Dni 1728.

I. A. Կնիֆ Leop. Armen.

Aprobamus.

2ա. Յօհաննէս Տօբիայ Ավկուշտինովիչ, Աստուծոյ եւ Առաքելական Աթոռոյն Արհեստակոպոս Լեօպոլսի, եւ ընդ բոլոր Թաղաւորութեանն Լեւաց, եւ մեծի դքսութեան Լիթվանիոյ, Հայոց եպիսկոպոս Մօլտավիոյ նոյն Ազգին Հայոց, սրբազան Տեառն մերոյ Փափին Բրէլադ, եւ Առնթերակաց:

Յորմէ հետէ Աստուածային դթութեամբն յԱրհիական աստիճանն բարձրացաք, զպատշաճաւոր հոգ յանձնի կալաք, զի, ըստ սրբազան Ժողովոց վճռոցն, Առաջնորդական պաշտաման մերում բաւական առնելով, զբարեկարգութենէ Եկեղեցեացս մերոց գրուած արկանէաք: Եւ քանզի Եկեղեցին Աստուծոյ գոչինչ սրբազոյն, եւ գերազանցազոյն ունի քան զսուրբ խորհուրդս, զորս Քրիստոս Տէրն մեր վասն փրկութեան

ազգի մարդկան սահմաննաց, զգիրքն, հասարակարար Մաշտոց կոչեցեալն, յորում կարգն պաշտելոյ զՄրբագան խորհուրդս, եւ զայլ արարողութիւնս կատարելոյ, պարունակի, տրամադրել յանձն առաք: Չոր ի ձեռն Աստուածաբանից մերոց, եւս առաւել ի բազմապայծառ Տեառն Ստեփանոսի Ստեփանեան Աստուածաբանութեան վարդապետին, զհին ձեռնագիր Մաշտոցս ընդ միմեանս բաղդատելով, եւ իբր զանհուն սխալութիւնս, որք ոչ միայն ընդդէմ իմացման աղօթիցն, այլ եւ ընդդէմ իսկ ուղղափառ հաւատոյս մերում սփռեալք էին, սրբագրել, եւ զսրբագրեալն կարգաւ յօրինել, նաեւ զհարկաւոր խրատսն իւրաքանչիւր խորհրդոցն, եւ արարողութեանցն յառաջ դնել, եւ որ ինչ պակաս էր ի մեր Մաշտոցն, ի Հոսովականէն, հետեւելով շաւղաց Նախորդացն մերոց, առեալն առադրել ջանացաք: Արդ զի եկեղեցեաց մերոց հոգարարձու բարօքն, ի բաց թողեալք զայլ Մաշտոցս, այսու միայն, զոր մեք՝ Արհիական Հեղինակութեամբ մերով աւփորձեցաք, եւ հաստատեցաք, այսուհետեւ վարեսցին, զխիղճ մտաց նոցին ծանրացուցանելով, պարտաւորեմք: Գրեցաւ յԱրհիական Պաղատն մեր ի Լէօպօլիս: Յամի Տեառն 1728, Ապրիլի ամսոյ Ժն:

Յ. Ա. Արհիակոսկոպոս Լեւոյ երկրի Հայոց
ի Լէօպօլիս:

մոհրին
տեղն

1. Թղ. 3ա. Հասարակ խրատք յաղագս այնոցիկ, զորս ի պաշտել զսուրբ խորհուրդս հասարակարար պահել պարտ է:

2ի այնոցիկ, որք ի հին սահմանադրութեանց կաթուղիկէ Եկեղեցւոյն...:

2. Թղ. 4ա. Յաղագս բարոք պաշտելոյ զխորհուրդն Մկրտութեան: — Յաղագս նիւթոյ մկրտութեան: — Յաղագս կերպի մկրտութեան: — Յաղագս պաշտօնէի մկրտութեան: — Յաղագս մկրտելոյ զտղայս: — Յաղագս կնքահարց: — Յաղագս ժամանակի եւ տեղոյ պաշտելոյ զմկրտութիւնն: — Յաղագս սրբադան իւղոց, եւ այլ հարկաւորաց: — [7ա—14ր այլ գրչէ, նորոգուած:]

3. Թղ. 7ա. Կարգ մկրտութեան Տղայոց: — Քահանայն զամենայն ինչ յառաջ ի պատրաստի ունելով...:

4. Թղ. 11բ. Յաղագս խորհրդոյ Դրոշմն:

5. 15ա. Յաղագս Մկրտութեան զարդացելոց: — Կարգ մկրտութեան զարդացելոց:

— 21ա. Կարգ լցուցանելոյ զթողեալսն ի վրայ զարդացեալ մկրտելոցն:

6. Թղ. 21ա. Օրհնութիւն ջրոյ մկրտութեան: «Յեկեղեցիս ուր չիք այն գովեալք սովորութիւն...»:

7. Թղ. 22ա. Կարգ օրհնելոյ զաւագանն մկրտութեան ի տօնի Յայտնութեան Տեառն, կամ արտաքոյ նորին, յորժամ ոչ գտցի օրհնեալ ջուր յաւագանն: Նախ լուսացի ի մաքրեսցի...:

